

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի Երասխահունի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 2-րդ կարգի մասնագետի (ծածկագիր 3.3-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

-- Իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները:

-- Քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է աշխատակազմի առջև դրված գործառնություններից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները:

-- Իրականացնում է քարտուղարի մոտ ընդունելության համար քաղաքացիների հերթագրումը:

-- Ապահովում է աշխատակազմի փաստաթղթային շրջանառությունը և լրացնում համապատասխան փաստաթղթերը:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում են.

_առնվազն միջնակարգ կրթություն

-սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ) ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

-տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

Մրցույթը կկայանա 2015թվականի դեկտեմբերի 23-ին ժամը 12.00-ին Երասխահունի գյուղապետարանի շենքում (հասցեն՝ գ. Երասխահուն փողոց N1 շենք N 9):

Մրցույթին մասնակցելու համար դիմող անձիք Երասխահունի գյուղապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- 1.Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):
- 2.Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի բնօրինակները պատճենների հետ միասին:
- 3.Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005թվականի մարտի 3-ի N10-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:
- 4.Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ:
- 5.Արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը:
- 6.Այլ պետությունների քաղաքացիները ՀՀ-ում աշխատելու իրավունքի փաստաթուղթ:

7.Անձնագրի պատճեն.

8.Սոցիալական քարտի պատճեն:

9.Ինքնակենսագրություն:

10.Մեկ լուսանկար 3x4 չափսի

Փաստաթղթերի պատճեները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար դիմել Երասխահունի գյուղապետարանի աշխատակազմ (հեռախոս 093-01-01-09) կամ Արմավիրի Մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն (հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան-71, հեռախոս 0237-2-76-49)

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը՝ 10.00-ից մինչև 16.00-ն, բացի ոչ աշխատանքային օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2015թվականի դեկտեմբերի 5-ը:

2015թվականի նոյեմբերի 20

գ. Երասխահուն

ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ